# Ի ՇԱՅ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ

ՍՄԿԿ Կենտկոմի պլենումի, ՍՍՀՄ Գերագույն սովետի արտահերթ նստաշրջանի արդյունքները շարունակվում են քննարկվել մարզի աշխատավորական կոլեկտիվներում: Մարդիկ գտնում են, որ ֆեոդալական սիստեմի ոչնչումը, իրավական հասարակարգի ստեղծումը հսկայական դեր կխաղան երկրի զարգացման ներկայիս պատասխանատու, բեկումնային փուլում: Աշխատավորները ըմբռնումով են ընկալել նստաշրջանում ընկեր Մ. Ս. Գորբաչովի ելույթում առաջ քաշված դրույթները վերակառուցման գործում սովետների դերի մասին:

Նրանք հույս ունեն, որ սովետները, ասել է թե ժողովուրդը, իրենց ծանրակշիռ ներդրումը կունենան ՍՍՀՄ հրաշակված բարձր նպատակների իրականացման գործում:

Այսօր քննադատական միտքը անխուսափելիորեն թափանցում է հասարակական կյանքի բոլոր ոլորտները: Եվ միանգամայն օրինաչափ է, որ նշելով ՍՍՀՄ սահմանադրության օրը, մարդիկ ուշադրությունը կենտրոնացնում են չլուծված պրոբլեմների, թերությունների, բացթողումների վրա:

Գ. ԲԱՂՅԱՆ

*Կուսակցության Հադրութի շրջկոմի առաջին քարտուղար*

Խոր գոհունակությամբ ընդունեցի ՍՄԿԿ Կենտկոմի օրերս տեղի ունեցած արտահերթ պլենումի և ՍՍՀՄ Գերագույն սովետի արտահերթ նստաշրջանի որոշումները, Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովի ելույթները դրանցում: Կենտկոմի քաղբյուրոյում և երկրի պետական իշխանության բարձրագույն մարմնում կատարված կադրային փոփոխությունները ժամանակին են և թելադրված են մեր հասարակության կյանքում կուսակցության ավանգարդային դերի մեծացմամբ, նրա գործունեության հետագա կատարելագործման անհրաժեշտությամբ: Համոզված եմ, որ մեր կուսակցության ղեկավար Մ. Ս. Գորբաչովին Գերագույն սովետի նախագահության նախագահի պոստում ընտրվելը կօգնի, կնպաստի սովետների ամրապնդմանն ու հեղինակության բարձրացմանը, մեր կյանքի բոլոր ոլորտներում դրանց ազդեցության ուժեղացմանը, այն բոլոր իրավունքների ու լիազորությունների պրակտիկ իրացմանը, որոնք տրված են երկրի հիմնական օրենքով՝ ՍՍՀՄ սահմանադրությամբ: Արտահերթ պլենումն ու նստաշրջանը դրեցին վերակառուցման և հրապարակայնության կուրսի իրականացման նոր փուլի սկիզբը: Երեք և կես տարի առաջ մեր երկրի կյանքում արմատական հեղաշրջում կատարվեց, տեղի ունեցավ ապրիլյան պլենումը, որը հոչակեց վերակառուցման, կյանքի նորացման կուրսը: 19-րդ կուսակցական կոնֆերանսը ճիշտ գնահատեց այդ ուղղությամբ կատարվածը, որոշեց հետագա անելիքները, հեղափոխական նորացման կոնկրետ ուղիները: Մասնավորապես անհրաժեշտ համարվեց վերակազմել ՍՄԿԿ Կենտկոմի և տեղական կուսակցական կոմիտեների ապարատը, վերանայել կուսակցական մարմինների ֆունկցիաները: Ահա այդ հարցն էլ դրված էր ՍՄԿԿ Կենտկոմի արտահերթ պլենումի քննարկմանը:

Լարված, հետաքրքիր աշխատանք է սկսվել կուսակցական կազմակերպություններում: Պլենումը միութենական հանրապետությունների կոմկուսների կենտկոմներին, կուսակցության երկրամասային կոմիտեներին, մարզկոմներին հանձնարարել է տեղի ունեցող հաշվետվությունների և ընտրությունների ընթացքում հատուկ ուշադրություն նվիրել կուսակցական ապարատի կադրերի ընտրության, այդ աշխատանքում այնպիսի ընկերների առաջքաշման հարցերին, ովքեր օժտված են քաղաքական ու գործնական բարձր հատկություններով, վերակառուցման համոզված կողմնակից են, կոմունիստների և անկուսակցականների շրջանում վստահություն և հեղինակություն են վայելում:

Մեր շրջանում տեղի ունեցող հաշվետվությունների և ընտրությունների ընթացքում ևս սկզբունքային խոսակցություն է գընում այն մասին, թե ինչպես շոշափելի դարձնել վերակառուցումը, կուսակցական-կազմակերպչական աշխատանքում արմատավորել գործարար ոճը, թույլ չտալ, որ ղեկավար պաշտոններում հայտնվեն այնպիսի մարդիկ, ովքեր կոփվել-դաստիարակվել են «բուռն ծափահարությունների» ոգով, հասնել նրան, որպեսզի միայն վերակառուցմանը նվիրված մարդիկ գլխավորեն կուսակցական, աշխատավորական կոլեկտիվները:

Կուսակցության Կենտկոմում և ՍՍՀՄ Գերագույն սովետում կատարված փոփոխությունները կընդգծեն վերակառուցման պրոցեսի արագացմանը, այն հրատապ խնդիրների լուծմանը, որոնք այսօր հուզում են մեր հասարակությանը:

Այդ թվում և ղարաբաղյան հարցի արդարացի լուծմանը:

Վ. ՋԱՎԱԴՅԱՆ

*Ժողովրդական դեպուտատների Մարտակերտի շրջսովետի գործկոմի նախագահ*

ՍՄԿԿ Կենտկոմի պլենումի, ՍՍՀՄ Գերագույն սովետի արտահերթ նստաշրջանի նյութերը շրջանում քննարկվում են ամենուրեք, ամենաձայրամասային գյուղերում անգամ: Հանդիպումներից, զրույցներից այն տպավորությունը ունեմ, որ մարդիկ լցվել են հույսերով, հույսեր, որոնց հիմքում ընկեր Մ. Ս. Գորբաչովի ձեռքին կուսակցական ու պետական ղեկավարության կենտրոնացման փաստն է: Ի՞նչ կարող է տալ մեզ, երկրին իշխանության ներկայացուցչական մարմինների գործունեության այդ նոր ձևը: Կարծում եմ, ավելին՝ համոզված եմ, դա կօգնի խորացնելու վերակառուցումը, կօգնի իշխանությունը վերադարձնելու սովետներին: Ահա թե ինչ եմ ակնկալում:

Վերջին ընտրություններից հետո փորձել ենք շրջանում սովետները դարձնել իրոք ժողովրդական, իրոք իշխանագործ: Այդ նպատակով ձգտել ենք առաջին հերթին նստաշրջանների, նիստերի արդյունավետությունը բարձրացնել: Քննարկվող հարցերի նախապատրաստմանը մասնակից ենք արել ավելի շատ մարդկանց, լսել դեպուտատների հաշվետվությունները, հարցապնդումները: Հատուկ գրաֆիկի համաձայն կազմակերպել ենք շրջանի ղեկավար աշխատողների հանդիպումներ տեղերում: Նախօրոք, ինարկե, այդ մասին հայտնի դարձնելով կոլեկտիվներին: Օգո՞ւտը: Հիմա, երբ նորից ընդհանրացնում ենք մեր արածը, տեսնում եմ, որ աննշան փոփոխություններ են կատարվել շրջանում: Նշանակություն ո՞ւնի՝ հարցնում եմ, թե նրա տաշրջանում ինչ ձևով է կազմակերպվում հարցի քննարկումը, եթե ընդունված որոշումն իրականացնելու հնարավորություններ չկան: Փորձում ենք վերակառուցել մեր գործունեությունը ու դեմ ենք առնում... պատի: Իշխանություն ենք առանց ուժի, հնարավորությունների: Չունենք մի գյուղական սովետ, որ կարողանամ որպես օրինակ բերել: Դրանք կախման մեջ են գտնվում տնտեսական ղեկավարներից, անզոր են որևէ քիչ թե շատ կարևոր հարց ինքնուրույն վճռելու: Դարձյալ նույն պատճառով: Չկա նյութաֆինանսական բազա:

Այսօր նորից, ինչպես տասնյակ տարիներ առաջ, գյուղերի, հատկապես լեռնային, բարեկարգման, ջրամատակարարման, էլեկտրիֆիկացման պրոբլեմներն են օրակարգում: Քանի անգամ ենք լսել, քննարկել ու ետ քաշնարկել: Տեղապտույտն էլ ինչպե՞ս է լինում: Միայն ջրախողովակների համար բազմիցս դիմել ենք համապատասխան մարմիններին: Լռություն են պահպանել: Թե մարզսովետը, թե հանրապետության Մինիստրների խորհուրդը, թե պետպլանը: Արդյունքում՝ մարդիկ մեզնից են երես թեքում, մեր դեպուտատների հանդեպ վստահությունը կորցնում: Ճիշտն ասած, մարզսովետի գործկոմն ինքը անուժ է այդպիսի հարցեր լուծելու համար: Զեռքին ի՞նչ կա: Միայն լուրջ, արմատական փոփոխությունները մարզի կյանքում կօգնեն բարձրացնելու սովետների դերը, հեղինակությունը: Վերջին ույթ ամսվա իրադարձություններն են բերել այդ համոզման, մեր գյուղերում նկատված որոշակի աշխուժությունը՝ կապված Հայաստանի հետ կոնտակտների ամրապնդման հետ: Մի օրինակ. Գետավանում առաջ է տարվում Հրազդանի «Շուշան» արտադրական միավորման ժողովրդական սպառման ապրանքների արտադրության «Հրազդան» կոոպերատիվի շինարարությունը: Այն կսկսի գործել նոյեմբերից, աշխատանքով կապահովի 150 մարդու, որոնց մեծ մասը առաջներում սեզոնային աշխատանքի էր մեկնում: Իսկ եթե տասը տարի առաջ հաստատվեի՞ն նման կապեր: Երևի հիմա շրջանը կունենար կյանքով լի, բարեշեն շատ գյուղեր: Ուրեմն, սոցիալ-տնտեսական զարգացման համար պայմաններն են բացակայել:

Մ. Ս. Գորբաչովը իր ելույթում նշեց. «Այս պոստում ես իմ առջև տեսնում եմ սովետների ամրապնդման ու հեղինակության բարձրացման, դրանք ժողովրդի լիակատար իշխանության իսկական մարմինների վերածման հիմար անհրաժեշտ ամենաբան անելու խնդիրը»:

Սպասում ենք դրան: Սպասում և պահանջում ենք վճռական ու եռանդուն գործողություններ, որպեսզի մեր աշխատանքը արդյունք տա, մեր որոշումները կատարվեն, չլսվեն-չմնան վերադաս ինչ-որ օղակում, որպեսզի կարողանանք մինչև վերջ իրականացնել ՍՍՀՄ սահմանադրությամբ մեզ տրված լիազորությունները: Որպեսզի գործնականում վերականգնվի ժողովրդապետությունը: Իսկ դա վերակառուցման հաջողության հիմնական պայմաններից մեկն է: